ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N Ա-09.06.01/1192

ք. Երևան 18 փետրվար 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Պողոսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի <<ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01.<<1192.Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում>> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 175699200 /մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր իննսունինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>>
Ք. Երևան, Կառավարական 2 շենք	ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Երևան, Վրացյան 73
Հ/Հ 900011005189	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Հ/Հ 900018005737
	ՀՎՀՀ01550374
	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Պողոսյան
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված
2019 թ. 18 փետրվարի
N Ա-09.06.01/1192 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	Իրականացվելիք միջոցառման				
	անվանումը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջ-վող գումարը (հազ. դրամ)
	Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում	Կիրականացվի Հայաստանի կրթական ցանցի մշտադիտարկում, կենտրոնական հանգույցի սերվերների սպասարկում, արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանություն, ինտերնետային պարունակության ֆիլտրում, հակավիրուսային պաշտպանություն, ուսումնական հաստատություններին էլեկտրոնային հասցեների տրամադրում, ուսումնական հաստատություններում կապի առկայության և օգտագործված ինտերնետային բովանդակության մշտադիտարկում, վիճակագրության վարում, վերլուծություն: Կկազմակերպվեն Հայկական կրթական միջավայր» պորտալի, «Հայկական կրթական միջավայր» ֆորումի, «Հեռավար ուսուցում» համակարգի, «Պաշարների շտեմարան» և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» կայքերի աշխատանքները, կհարստացվի բովանդակային	2019 թվականին շուրջօրյա կաշխատի Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցը, ապահովելով 1420 ուսումնական հաստատություններին մեկ կենտրոնում միակցելու գործընթացը: Կսպասարկվեն ցանցում ընդգրկված բոլոր ուսումնական հաստատությունների էլեկտրոնային հասցեները: Մշտական հսկողություն կիրագործվի Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված ուսումնական հաստատություններին մատակարարված կապի առկայության, որակի, հաստատությունների օգտագործած ինտերնետային բովանդակության նկատմամբ: Կսպասարկվեն կենտրոնական հանգույցի սերվերները, կֆիլտրվի ինտերնետային բովանդակությունն ու կիրականացվի արտաքին միջամտություններից պաշտպանություն: Կկազմվեն համապատասխան ամսեկան հաշվետվություններ: 2019 թվականի ընթացքում 400000 շահառուների	դեկ-տեմբեր 2019	165699,2

		պարունակությունը, կիրականացվի ՀՀ և ԼՂՀ ուսումնական հաստատությունների ինտերնետային էջերի տեխնիկական և ծրագրային սպասարկում: Կշահագործվի «Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը» (ՇԻՀԿ), մասնավորապես ՇԻՀԿ-ում իրականացվելու է «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդում դպրոցների աշակերտներին, ինչպես նաև դպրոցների ուսուցիչների վերապատրաստում (ինֆորմատիկա, համակարգչային հմտություններ, ինտերնետ, էլեկտրոնային փոստ): Կիրականացվի հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում: Կհամակարգվեն կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերը: Կապահովվի Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականությունը: Կձևավորվի դպրոցների վիրտուալ համայնքը, կիրականացվի ՏՀՏ կիրառմամբ համագործակցություն և ուսուցման գործընթացի կազմակերպման ազգային ծրագիրը: ՀՀ դպրոցներում կիրականացվի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների համալրվածության և կիրառության ուսումնասիրություն: Կկազմվեն հարցաթերթեր, կձևավորվի ընտրանք, բոլոր պետական դպրոցների կբաշխվեն իրենց համապատասխան էլեկտրոնային հարցաթերթեր: Լրացված հարցաթերթերի հավաքագրումից հետո կմաքրվեն SPSS բազաները, կճշգրտվեն և կլրամշակվեն տվյալները: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի շահագործում, բովանդակային լրամշակման, թարմացման և	համար կշահագործվեն «Հայկական կրթական միջավայր» պորտալը (www.armedu.am), «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (http://forum.armedu.am), «Հեռավար ուսուցում» համակարգը (http://elearning.armedu.am/), «Պաշարների շտեմարան» (http://lib.armedu.am), eTwinning Plus ծրագրի (http://etwinningplus.armedu.am) և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) կայքերը, առնվազն 10 տոկոսով կհարստացվի կայքերի բովանդակային պարունակությունը: Յուրաքանչյուր եռամսյակում կիրականացվի հեռավար ուսուցման դասընթացների կազմակերպման հմտությունների վերապատրաստումներ ՀՀ և ԼՂՀ շուրջ 50 ուսուցիչների համար: Կիրականացվի ուսումնական գործընթացում կիրառվող ՏՀՏ գործիքների և ծրագրային լուծումների տեղայնացում և օգտագործում 2019 թվականի ընթացքում ՇԻՀԿ-ը Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առնվազն 20 դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար դասընթացներ կկազմակերպի: Յուրաքանչյուր բնակավայրում դասընթացներին կմասնակցեն միջին հաշվով 20 հոգի: Ազատ աշակերտական տեղերի և/կամ աշխատաժամանակի առկայության դեպքում, դասընթացներին կարող են մասնակցել նաև տվյալ բնակավայրի մեկ այլ դպրոցի և/կամ հարևան բնակավայրի դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները: Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում: ՀՀ		

		ծրագրային սպասարկման աշխատանքներ, հանրակրթական ուսումնական հաստատությունների տվյալների հավաքագրում, հիմնապաշարների ստեղծում և վարում: Հավաքագրված տվյալների մշակում, վերլուծություն, հանրակրթության (ՀՀ և ԼՂՀ) վարչական ռեգիստրի վարում, տվյալների մշակում և հաստատված ձևերին ու ժամկետներին համապատասխան ՀՀ ՎԿ ներկայացում և այլ շահագրգիռ կազմակերպություններին տրամադրում:	վիճակագրական կոմիտեի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի կողմից սահմանված ձևաչափերով (Հարցաշար A «Սովորողներ և ուսուցիչներ 0-4», Հարցաշար C «Սովորողներ և ուսուցիչներ 5-8») ամփոփ հաշետվությունների ներկայացում: Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կկազմակերպվեն հանդիպումներ, քննարկումներ, կիրականացվեն համատեղ աշխատանքներ: Բոլոր գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրականացվի ՏՀՏ կարիքի ուսումնասիրություն, վերլուծություն, առաջարկների մշակում և կտրամադրվի քաղաքականություն մշակողներին: ԴԿՏՀ-ի էլեկտրոնային տարբերակի բովանդակությունը կհամապատասխանեցվի ՀՀ կրթության օրենսդրության փոփոխություններին, ԴԿՏՀ-ում ներգրավված շուրջ 1410 ուսումնական հաստատություններին աշխատանքային օրերին և ժամերին կտրամադրվի աջակցություն ծրագրային և տեխնիկական խնդիրների լուծման համար: Կպատրաստվեն վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների:		
		Կիրականացվի համակարգիչների, ցանցային սարքավորումների և գույքի գնում՝ Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցի և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի շարքից դուրս եկած	2019 թվականին անխափան կաշխատի Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցը, կապահովվի ԿՏԱԿ-ի բնականոն գործունեությունը: Կիրականացվի գույքի և	դեկ-տեմբեր 2019	10000,0

		կամ ֆիզիկապես ու բարոյապես մաշված համակարգիչների ու սերվերների փոխարինման նպատակով:	համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ նոր գրասենյակում ԿՏԱԿ-ի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով		
	Ընդամենը				175699.2

Նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 2 շենք

ՀՀ ՖՆ գործարնական վարչություն

Հ/Հ 900011005189

Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

<<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>> ՊՈԱԿ

Երևան, Վրացյան 73

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900018005737

ՀՎՀՀ01550374

Տնօրեն՝

_____Ա.Պողոսյան

(ստորագրություն)